

14395

ՀՐԱՀԱՆԳ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՇԱՐԺ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹԻՒՆ

— 1881 —

347
Հ. 99

Printed in Turkey

347

Հ-99

5

ՀՐԱՄԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՇԱՐԺ ՍԵՊԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

Յօդուած 1. Կոստանդնուպոլիսոց և գաւառական թաղական խորհրդոց, կալուածական հոգաբարձութեանց, վանական միաբանութեանց և այլ ամեն կարգի Ազգային մարմնոց տրամադրութեան ներքեւ գտնուած հաստատութիւնք և անշարժ ստացուածք որի Տաճկաստան կամ այլուր արձանագրութեան ենթակայ են:

Այս անշարժ ստացուածներն երեք կարգի բաժնուած են հետեւեալ կերպիւ:

Առաջին. Ամեն տեսակ ազգային հաստատութիւնք, ինչպէս Վանք, Եկեղեցի՝ վարժարան՝ գերեզմանատուն՝ Հիւանդանոյ՝ Մատուռ՝ Ուխտատեղի՝ Որբանոց ևայլն.

Երկրորդ. Վերոդիեալ ազգային հաստատութեանց՝ կամ ազգային հոգաբարձութեանց և ընկերութեանց ևայլն սեպհական



547

39

2010

ամեն տեսակ շինք և գետին, ինչպէս են
Տուն, Խանութ, Քաղնիք, Զաղացք, Պան-
դոկ, Գետին, Պարտէզ, Արտ, Այդի և այլն :

Երրորդ . Ամեն տեսակ գետին կամ շինք
որ թէեւ ազգին սեպհական չեն՝ և մասնա-
ւորաց կը պատկանին, բայց ազգային հասա-
տութեանց վրայ գարձած են աւանդաբար :

Յօդ. 2. Ամեն թաղական խորհուրդ և
Միաբանութիւն, ազգային Ընկերութիւններ
և Հոգաբարձութիւններ և այն ամեն մարմին-
ներն՝ որք ուղղակի իրենց տրամադրութեան
ներքեւ ազգային հաստատութիւններ և ազ-
գին սեպհական կամ աւանդ անշարժ ստաց-
ուածքներ ունին՝ պարտական են մասնաւոր
տումարի մէջ արձանագրել զանոնք հանդերձ
հետեւեալ կարեւոր ծանօթութեամբք :

Ա. Գաւառագլուխն

Բ. Քաղաքն

Գ. Գիւղաքաղաքն կամ թաղն

Դ. Գիւղն կամ թաղն

Ե. Փողոցն

Զ. Թուահամարն

Է. Որ առաջնորդութեան կամ վանահայ-
րութեան ներքեւ լինելը :

Ը. Սեպհականութեան որու վրայ ֆեռալինելը:

Թ. Սեպհականութեան որ ազգային հաս-
տատութեան յատկացեալ լինելը կամ եթէ
աւանդ է որ անձին վերաբերիլը :

Ժ. Կալուածին Հանքի կամ Գում լինելը և ե-
թէ Հանքի է որ Հանքին լինելը :

ՃԱ. Վահեք կամ Գում Հանքի ունենալը կամ
չունենալը :

ԺԲ. Եթէ արտ այդի և այլն է արտունի երեւ
մավագագիւթիւններ :

ԺԳ. Կալուածագիր («Հնէո») ունենալը և Ե-
թէ ունի քանի հատ լինելը և թուականը :

ԺԴ. Գետնին տարածութեան քանի քա-
ռակուսի կանդուն լինելը և եթէ շինք ունի
քանի կանդունի վրայ կառուցուած լինելը,
իսկ եթէ արտ այդի և այլն է, քանի արտա-
վար («Ենէւ») լինելը :

ԺԵ. Սեպհականութեան տարեկան տուրքը:

ԳԶ. Սեպհականութեան տարեկան վարձքը:

ԺԷ. Սեպհականութեան արժէքը :

ԺԸ. Սեպհականութեանց սահմանը :

ԺԹ. Կարեւոր այլ զանազան ծանօթու-
թիւնք :

Յօդ. 3. Թաղական խորհուրդք, Վանօ-
րէեց միաբանութիւնք, կալուածատէր հո-
գաբարձութիւնք և ընկերութիւնք վերոգը-
րեալ ծանօթութիւնքը պարունակող տու-
մարներ պատրաստելն յետոյ՝ հետզետէ
գնուած անշարժ սեպհականութիւններն կար-
ձանագրեն : Եթէ վաճառում տեղի ունենայ,
կամ եթէ գետնի մը վրայ շինք մը կառուց-
ուի կամ արդէն կառուցեալ շինքը փոխուի
կամ ընդարձակուի և կամ փոքրցուի, զա-
նոնք եւս տումարին ծանօթութեանց սիւ-
նակին մէջ կը նշանակեն :

Յօդ. 4. Բացի կալուածական արձանաւ-
գրութեան տումարէն վերոգրեալ մարմինք
պարտին նաեւ ծանօթութեան տումար մ'ու-
նենալ՝ յորում իւրաքանչիւր կալուածի գըն-
ման, վաճառման, նորոգութեան պատճառ-
ներուն գնոյն և զանազան պարագաներուն
նկատմամբ հարկ եղած տեղեկութիւնքը
կարձանագրեն :

Յօդ. 5. Թաղական խորհուրդք, Վանօ-
րէից միաբանութիւնք, կալուածական ըն-
կերութիւնք և հոգաբարձութիւնք՝ իրենց
կալուածական արձանագրութեան տումարին
համանաման ցանկեր կը պատրաստեն :

Կոստանդնուպոլսոյ Թաղ. խորհուրդք և
կալուածական ընկերութիւնք, Հիւանդանոցի
և այլ կալուածական հոգաբարձութիւնք մի
օրինակ ցանկ կը պատրաստեն և վաւերացեալ
կը զրկեն Ազգային կեդրոնական Վարչու-
թեան :

Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան
թեմական առաջնորդութեանց և միաբանու-
թեանց ենթարկեալ Թաղական խորհուրդք
և այլ կալուածական մարմինք երկ օրինակ
ցանկ կը պատրաստեն և կնքեալ կը զրկեն
իրենց առաջնորդին կամ վանահօր, որն որ
մի օրինակը կը պահէ և միւսը վաւերացնե-
լով անմիջապէս կը յղէ Ազգային կեդրոնա-
կան վարչութեան :

Սուրբ Երուսաղիմայ Պատրիարքութեան,

Կիլիկիոյ և Աղթամարայ կաթուղիկոսութեանց
վիճակաց մէջ գտնուած թաղական խորհուրդք
և այլ կալուածական մարմինք երեքական օ-
րինակ ցանկ կը պատրաստեն և կը յղեն ի-
րենց առաջնորդին որ մէն մի օրինակը պահե-
լով՝ և միւսներն վաւերելով անմիջապէս կը
յղէ մին Ազգային կեդրոնական Վարչութիւն
և միւսն իւր Պատրիարքին կամ կաթուղի-
կոսին : Իսկ Սուրբ Երուսաղիմայ Պատրիար-
քութեան և Կիլիկիոյ և Աղթամարայ կաթու-
ղիկոսութեանց աթոռանիստ քաղաքաց և
շրջակայից Թաղական խորհուրդք և այլ կալ-
ուածական մարմինք երկ օրինակ ցանկ կը
պատրաստեն և կը յղեն իրենց Պատրիարքին
կամ կաթուղիկոսին որ մէն մի օրինակը կը
պահէ և միւսներն վաւերելով անմիջապէս կը
յղէ կեդրոնական Վարչութեան :

Յօդ. 6. Կոստանդնուպոլսոյ Պատրիարքու-
թեան թեմական Առաջնորդք և Վանական
միաբանութիւնք իրենց թեմերէն ընդունած
ցանկերէն քաղելով՝ վիճակային ընդհանուր
տումար կը պատրաստեն, և այդ տումարէն
քաղեալ վիճակային ընդհանուր կալուածա-
կան ցանկ մի շնելով՝ կը զրկեն Ազգային
կեդրոնական Վարչութեան :

Յօդ. 7. Սուրբ Երուսաղիմայ Պատրիար-
քութեան, Կիլիկիոյ և Աղթամարայ կաթու-
ղիկոսութեանց վիճակաց մէջ գտնուած թե-
մական Առաջնորդք և միաբանութիւնք ի-

բենց տումարներէն քաղելով և երկ օրինակ փիճակային ընդհանուր ցանկ կը պատրաստեն և կուղղեն անմիջապէս մին Ազգային կեդրոնական վարչութեան, իսկ միւսն առ Պատրիարքն և կամ առ կաթուղիկոսն իւրեանց :

Յօդ. 8. Սուրբ Երուսաղիմայ Պատրիարքն, Տանն կիլիկիոյ և Աղթամարայ կաթուղիկոսունք իրենց աթոռանիստ քաղաքաց և շրջադարձից մէջ դժուած Ազգային մարմոց ցանկերէն քաղեալ վիճակացոյց մը կը շինեն և անմիջապէս կը յղեն Ազգային կեդրոնական Վարչութեան :

Յօդ. 9. Նաեւո Սուրբ Երուսաղիմայ Պատրիարքն և կիլիկիոյ և Աղթամարայ կաթուղիկոսունք իրենց թեմական մարմիններէն ստացած ցանկերէն քաղելով Պատրիարքական կամ կաթուղիկոսական թեմերուն կալուածական ընդհանուր տումարն կը պատրաստեն հանդերձ կալուածական ծանօթութեանց տումարովն, որոց պատճէնը ի հարկն կը հաղորդեն Ազգային կեդրոնական Վարչութեան :

Յօդ. 10. Իւրաքանչիւր Թաղական խորհուրդք, վանօրպյք, կալուածական հոգաբարձութիւնք ևայն իրենց կալուածական ծանօթութեանց տումարէնք քաղելով ամեն տարի մայիս մէկին նախսրդ տարւոյ մէջ կալուածոց վերաբերեալ գնման, վաճառման, շնուրթեան, նորոգութեան և այլ պարագա-

յից նկատմամբ տեղեկագիր կը շինեն՝ մի, երկու կամ երեք օրինակ և սոքա մի և նոյն եղանակաւ կը հաղորդուին կեդրոնական Վարչութեան, ինչպէս կալուածական նախնական ցանկերն :

Յօդ. 11. Վերսողքեալ բոլոր կալուածական մարմինք՝ իրենց տրամադրութեան ներքեւ դժուած երեք կարգի անշարժ ստացուածոց կալուածագրերուն մէկ մէկ օրինակն եւս հանելով կնքեալ և վաւերացեալ կը հաղորդեն Ազգային կեդրոնական Վարչութեան իրենց հոգեւոր գլխոյն միջոցաւ :

Յօդ. 12. Ազգային Պատրիարքարանի Տընտեսական Տեսչութեան ճիւղին մէջ եւս զանազան տումարներ պիտի բռնուին ուր պիտի արձանագրուին վերոգրեալ կաթուղիկոսներէ, երուսաղիմայ Պատրիարքութենէն, թեմական Առաջնորդներէն, Վանահայրներէն և կոստանդնուպոլսոյ մարմիններէն ներկայացած բոլոր կալուածական ցանկերն, կալուածագրերն և ասոնց վերաբերեալ ամեն տեսակ տեղեկութիւնք :

ՄԱՍՆԱԿՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանին, Սուրբ Երուսաղիմայ Պատրիարքարանին, Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսութեանց, Առաջ-

79395

— 8 —

Նորդաց, վանահարց, Թաղական խորհրդոց
և այլ կալուածական մարմնոց և հոգաբար-
ձութեանց գործածելիք տումարաց ձեւին և
ընթացից նկատմամբ, մանրամասն հրահանդ
պիտի պատրաստուի և ի հարկին սոյն կալուա-
ծական արձանագրութեանց յարմար տպեալ
տումարներ պիտի զիկուին, բայց մինչեւ այդ
տումարները պատրաստուին՝ պէտք է իւրա-
քանչիւր վերին և ստորագդաս մարմիններ, հը-
րահանդիս տրամադրութիւնները գոհայնող
առ ժամանակեայ տումարներ բռնեն, որպէս
զի՝ կարելի լինի Ազգային վարչութեան պա-
հանջած կալուածական արձանագրութիւն-
ներն անմիջապէս յղել, և կեդրոնին մէջ
այժմ հարկ եղած ընդհանուր տումարին
պատրաստութեանը ձեռնարկուիլ:

18 Մարտ 1881

Ծանօթ. Այն վանքերն որ Առաջնորդի մը եւ
կամ ուրիշ վանուց միաբանութեան իրաւասու-
թեան ենթարկեալ են իրենց եւ իրենց թեմերուն՝
եթէ ունին՝ կալուածական ցանկերն ձիշդ Գա-
ւառական Թաղական խորհրդոց նման եւ ըստ
տեղւոյն մի երկու կամ երեք օրինակ պատրաս-
տելով կը զրկեն իրենց վերադաս Առաջնորդին
կամ Վանահօր՝ որ ստանալով զայնս մի եւ նոյն
կերպով հարկ եղած գործողութիւնը կը կատարէ
ինչպէս որ պարտական է կատարել իւր իրաւա-
սութեան ենթարկեալ կալուածական մարմնոց
ցանկերուն նկատմամբ :

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0047479

Այն տեսրերը որ Աղգային կեղրոնա-
կան Վարչութեան Տնտեսական Տեսչու-
թեան կնիքը չեն կրեր՝ անվաւեր են :

Ազգային կեղր. Վարչութեան
Տնտեսական Խորհրդական
Գ. Յ. Մելիք
